3) 2006 թվականի ապրիլի 18-ին Նույն Մանուկյանը ծանուցվել է 2006 թվականի ապրիլի 21-ից աշխատանքից ազատման և Ըկերության հետ կնքած աշխատանքային դայմանագրի լուծման մասին:

4) Ընկերության գործադիր գլխավոր սնօրենի 2006 թվականի ապրիլի 19-ի թիվ 503-Կ հրամանով Նույն Մանուկյանն ազատվել է աշխատանքից, և լուծվել է նրա հետ կնքված թիվ 1077 աշխատանքային դայմանագիրը, ինչդեպ նաև որոշվել է վերջնահաշվարկ կատարել և ծանուցման ժամկետանց 57 օրվա համար վճարել սուժանք:

5) Ընկերության կողմից Վերաբնօրինակ դատարանին ներկայացված գրության (ամսաթիվը և համարակալումը բացակայում են) համաձայն՝ Ընկերությունն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում Նույն Մանուկյանին համադասասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորություն չի ունեցել:

4. Վճռաբեկ դատարանի դատառարարությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իր որոշմամբ արդեն անդրադարձել է նշված իրավական հարցի գնահատականին (սես՝ Աժոս Միբոյան ընդդեմ «ԱրմենՏել» համատեղ ձեռնարկություն փակ բաժնետիրական ընկերության, 2006 թվականի հոկտեմբերի 26, քաղ. գործ թիվ 3-1775/ՎԳ (աշխատանքում վերականգնելու և հարկադիր դատադուրդի ամբողջ ժամանակահատվածի գումարը բռնագանձելու դիմումներով)):

Սակայն կարևորելով սույն բողոքի հիմքում ընկած իրավական հարցադրումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նշված հարցին և գտնում է, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված դայմանագիրը, ինչդեպ նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային դայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ արտադրության ծավալների, ցնեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման դայմանների փոփոխման, ինչդեպ նաև արտադրական անհրաժեշտությամբ դայմանավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով գործատուն աշխատանքային դայմանագիրը կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական դատաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համադասասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության և իրավահավասարության հիման վրա: Մրցակցության սկզբունքի սարբեր են սահմանված նույն օրենսգրքի 48-րդ հոդվածում, համաձայն որի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ղեկ է առնող իր դիմումների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքներ:

Սույն գործով որոշելու համար թե դատավարության որ կողմի վրա է ընկնում Ընկերությունում համադասասխան այլ աշխատանքի առկայության կամ բացակայության առաջնությունը, Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ սլյալ դեպքում, հայցվորը կարող է նման առաջույց ձեռք բերել միայն դատաստանողից, քանի որ Ընկերությունում համադասասխան այլ աշխատանքի առկայության կամ

բացակայության փաստը հավաստող աղացույցը դեֆ է առկա լինելու Ընկերության ներքին փաստաթղթերում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործատուն չի կարող անմիջականորեն կիրառել աշխատանքից ազատելու իր լիազորությունը, քանի որ այդ լիազորության իրականացման համար անհրաժեշտ է աշխատողի հրաժարումը առաջարկված աշխատանքից:

Հետևաբար, գործատուն կրում է անուղակի աղացուցման դատարկացման օրենսդրության հանդեպ՝ նրան արտադրության ծավալների, ցնցեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման դայնամիկների փոփոխման, ինչդեպ նաև արտադրական անհրաժեշտությամբ դայնամավորված՝ աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում աշխատանքից ազատելու աղացուցելու, որ իր մոտ բացակայում է նրա մասնագիտական դատարկացմանը, որակավորմանը, առողջական վիճակին համադասախան այլ աշխատանք:

Որդես աղացուցման դատարկացման կատարման և դատարանի կողմից դատարկացման չափանիշ՝ ՀՀ քաղաքացիական դատարկացման օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված է աղացուցների թույլատրելիությունը, ըստ որի՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն դեֆ է հաստատվել միայն որոշակի աղացուցներով, չեն կարող հաստատվել այլ աղացուցներով:

Սույն քաղաքացիական գործով բացակայում է համադասախան թույլատրելի աղացուցը (օրինակ՝ կազմակերպության աշխատողների քանակը և դատարկացման անվանումները սահմանող փաստաթղթերը) այն մասին, որ դատարկացման Ընկերությունում առկա չէ հայցվորի մասնագիտական դատարկացմանը և որակավորմանը համադասախան այլ աշխատանք:

Նույն Մանուկյանի մասնագիտական դատարկացմանը և որակավորմանը համադասախան այլ աշխատանք չլինելու վերաբերյալ փաստը Վերաբերյալ դատարանը հաստատված է համարել Ընկերության կողմից ներկայացված գրությամբ, համաձայն որի՝ Ընկերությունն իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում Նույն Մանուկյանին համադասախան այլ աշխատանք առաջարկելու հնարավորություն չի ունեցել:

Դատարկացման ընթացքում Ընկերության ներկայացուցիչը տրոհել է Ընկերությունում համադասախան աշխատանքի բացակայությունը, սակայն այդ փաստը հաստատող թույլատրելի և վերաբերելի որևէ աղացուց դատարանին չի ներկայացրել:

Նշված հետևությունների համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ Ընկերության ներկայացուցիչը համադասախան աշխատանքի բացակայության վերաբերյալ առաջին այսպիսի դատարանում գործի քննության ժամանակ որևէ աղացուց չի ներկայացրել, մինչդեռ նման աղացուցը դեֆ է առկա լինելու և հիմք հանդիսանալու Նույն Մանուկյանին առանց այլ համադասախան աշխատանք առաջարկելու աշխատանքից ազատման հրամանի համար: Վերաբերյալ դատարանում Ընկերության կողմից ներկայացված աղացուցը Վճռաբեկ դատարանը, սույն գործի փաստերից ելնելով, թույլատրելի չի համարում:

2) *բողոքը երկրորդ հիմնով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմնով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված դայնամագիտոր լուծելի գործատուն դատարկացում է այդ մասին աշխատողին ծանուցել նույն օրենսգրքի 115-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետները չդիտարկելու դեպքում գործատուի պարտավորություն է աշխատողին վճարել տուգանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանոց օրվա համար, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով աշխատողի միջին ժամային աշխատավարձի չափը: Ընկերության գլխավոր տնօրենի 2006 թվականի ապրիլի 19-ի թիվ 503-Կ հրամանում նախատեսվում է դասասխանողին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վճարել նրա միջին ժամային աշխատավարձը 57 օրվա համար:

Տվյալ դեպքում տուգանքի գումարի վճարումը ազատում է դասասխանողին տվյալ նորմի խախտման հետ կապված հետագա որևիցե դասասխանավորությունից:

Բացի այդ, հայցվորի դիմումը, որ Վերաքննիչ դատարանն անցեսել է այն հանգամանքը, որ դայմանագիր կնքելիս կողմերին հայտնի է եղել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, սակայն կողմերը փոխադարձ համաձայնությամբ այն չեն ընդգրկել դայմանագրում, ուստի և այն կիրառելի չէ, անհիմն է հետևյալ դատաճառաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ աշխատանքային օրենսդրությամբ: Աշխատանքային օրենսգրքով կարգավորման բացակայության դայմաններում Վճարելի դատարանը գտնում է, որ սույն գործով առաջացած իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դայմանագրի դայմանների մասին ընդհանուր դրույթները, մասնավորապես 437-րդ հոդվածի 4-րդ մասը, որի համաձայն՝ դայմանագրի դայմանները որոշվում են կողմերի համաձայնությամբ, բացի այն դեպքերից, երբ համադասասխան դայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով: Նույն օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դայմանագիրը ղեկ է համադասասխանի այն կնքելու ժամանակ գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմդերաշիվ նորմերին):

Վերոնշյալ հոդվածներից հետևում է, որ կողմերը փոխադարձ համաձայնությամբ չեն կարող փոփոխել կամ իրենց միջև ծագող դայմանագրային հարաբերությունների նկատմամբ չկիրառել օրենքով նախատեսված նորմատիվ դատաճառ:

Այսպիսով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գործատուի պարտավորության չկատարման միակ իրավական հետևանք է հանդիսանում նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված տուգանքի վճարումը և չի կարող հանգեցնել աշխատանքային դայմանագրի լուծման կառավարությամբ ընդունված իրավական ակտի անվավերությանը:

3) բողոքը երրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատարանության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր առաջույց գնահատում է գործում եղած բոլոր առաջույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բողոքի առաջին հիմքի դատաճառաբանությունից ուղղակիորեն բխում է, որ Վերաքննիչ դատարանը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի չի գնահատել գործում առկա առաջույցները:

Այսպիսով, սույն բողոքի առաջին և երրորդ հիմքերի առկայությունը Վճարելի

դասարանը դիտում է բավարար ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների ուժով վերանայվող դասական ակսը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դասարանի 2006 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը և գործն ուղարկել նույն դասարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դաիից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ սնտեսական դատարանի վճիռ
Քաղաքացիական գործ թիվ S-1-163/2006թ.
Նախագահող դատավոր՝ Էդ.Նահապետյան

Քաղաքացիական գործ թիվ 3-35 (ՏԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դալարսը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐԶՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ

2007 թվականի հունվարի 26-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դեսական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ սնտեսական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ S-1-163/2006թ. քաղաքացիական գործով կայացրած վճռի դեմ՝ ըստ դիմումի «Վասիլ» սահմանափակ դասասխանասվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Ծառայության՝ 2006 թվականի փետրվարի 22-ի թիվ 1007374 ստուգման ակտը մասնակի անվավեր ճանաչելու դահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1.Գործի դատարական նախադասմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը դահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 2006 թվականի փետրվարի 22-ի թիվ 1007374 ստուգման ակտը՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար հաշվարկված 1 632 300 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամ սուգանքի մասով:

ՀՀ սնտեսական դատարանի (այսուհետ՝ Դատարան) 2006 թվականի հոկտեմբերի 25-ի վճռով դիմումը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը:

Վճռաբեկ բողոքին դասասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհոիբյալ հիմնավորումներով.

1) Դասարանը սխալ է մեկնաբանել «Ընդերքն օգտակար հանածոների ԵՊՀ-ի նախնական և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 76-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված դեպքում ղեկավարվում է հետևյալ փաստարկներով.

Դասարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերությունը թիվ ՀՍ-Լ-14/143 հանքարդյունահանման հասույ լիցենզիայի ստացել է 2004 թվականի մայիսի 4-ին, իսկ ՀՀ առևտրի և սննդամթերքի գյուղատնտեսության և ՀՀ բնապահպանության նախարարության հետ հանքարդյունահանման նախարարության կողմից ընդերքի օգտագործման թիվ 179 լիցենզիային դրամագիրը կնքել է 2005 թվականի օգոստոսի 25-ին: Հետևաբար, «Ընդերքն օգտակար հանածոների ԵՊՀ-ի նախնական և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Ընկերությունն իրականացրել է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն:

2) Դասարանը չի կիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասը, որոնք ղեկավարվում է կիրառել:

Բողոք բերած անձը նշված դեպքում ղեկավարվում է հետևյալ փաստարկներով.

3) «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասը հիմք ընդունելով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության 1999 թվականի հունվարի 29-ի թիվ ՀՎ-Ը-13/62 օգտակար հանածոների արդյունահանման արձեղանագիրը 2004 թվականի հունիսի 1-ից ճանաչվել է ուժը կորցրած, հետևաբար, այդ թույլտվության անբաժանելի մասը կազմող 2001 թվականի օգոստոսի 28-ի ընդերքի սրամադրման և օգտագործման թիվ 215 դրամագիրը նույնպես ճանաչվում է ուժը կորցրած: Դասարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ գործունեության թույլտվության անբաժանելի մասը կազմող լիցենզիային դրամագրի բացակայությունն Ընկերության նկատմամբ, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն, տուգանք հաշվարկելու հիմք է:

Դասարանը կիրառել է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, որը չղեկավարվում է կիրառել և չի կիրառել «Բնապահպանության և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ և 20-րդ հոդվածները, որոնք ղեկավարվում է կիրառել:

Բողոք բերած անձը վճարել է բողոքի սույն հիմքի վերաբերյալ հիմնավորումներ չի ներկայացրել:

Վճարել է բողոք բերած անձը ղեկավարվել է բեկանել Դասարանի 2006 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2.1. Վճարել է բողոքի դրամագրում բերված փաստարկները.

1) «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմինն առաջադրվում է հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի, դատարանի և սոցիալական առաջադրության վճարների մասին օրենսդրության դրամագրների կատարման և կիրառման հսկողությունը:

«Ընդերքն օգտակար հանածոների ԵՊՀ-ի նախնական և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքը հարկային հարաբերություններ չի կարգավորում: Նշված օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ կետը դատարանի է միայն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո նոր հանգամանքի իրավունք ձեռք բերողի համար:

2) ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանքավայրերի ԵՊՀ-ի նախնական կատարման և լիցենզավորված մարմնի և ընդերքի օգտագործողի

միջև կնքված դայմանագրի համաձայն:

Վերոնշյալ հոդվածում չի խոսվում լիցենզային դայմանագրի մասին, ուսի և օրենսգրքի և «Ընդերին օգտակար հանածոների ԵՊՀ-ի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի միջև առկա է հակասություն:

3. ՎՃՌԱՔԵԿ ԲՈՂՈՒՄԻ ԲՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԻ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՍՏԵՐԸ.

ՎՃՌԱՔԵԿ ԲՈՂՈՒՄԻ ԲՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԻ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՍՏԵՐԸ.

1) 1999 թվականի հունվարի 29-ին Ընկերությանը սրվել է օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՀՎ-Ը-13/62 արժույթագրով:

2) 2001 թվականի օգոստոսի 28-ին Ընկերության և ՀՀ բնադաշտային նախարարության միջև կնքվել է հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերին սրամադրման և օգտագործման թիվ 215 դայմանագիրը:

3) 2004 թվականի մայիսի 4-ին ՀՀ առևտրի և սննդամթերքի նախարարության կողմից Ընկերությանը սրամադրվել է հանքարդյունահանման թիվ ՀԱ-Լ-14/143 հասույթ լիցենզիան:

4) 2005 թվականի օգոստոսի 25-ին Ընկերության և ՀՀ առևտրի և սննդամթերքի նախարարության, ՀՀ բնադաշտային նախարարությունների միջև կնքվել է հանքարդյունահանման նպատակով ընդերֆոգտագործման թիվ 179 լիցենզային դայմանագիրը:

5) Ծառայության դեռի 2006 թվականի փետրվարի 3-ի թիվ 1007374 հանձնարարագրի հիման վրա՝ 2006 թվականի փետրվարի 13-ից մինչև փետրվարի 22-ը Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին դաշտային կատարման ճշտության ստուգում:

6) 2006 թվականի փետրվարի 22-ին կազմվել է թիվ 1007374 սուղման ակտը, որով առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությանը զբաղվելու համար հաշվարկվել է սուղման 1 632 300 (մեկ միլիոն վեց հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով:

4. ՎՃՌԱՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԱԲԱՆՈՒՄԻՆԵՐԸ ԵՎ ԵԳՐԱԿԱՆՈՒՄԸ.

Քննելով վՃՌԱՔԵԿ ԲՈՂՈՒՄԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԻ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՍՏԵՐԸ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ, որ՝

1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

«Ընդերին օգտակար հանածոների ԵՊՀ-ի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն սննդամթերքի սուբյեկտները, որը մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու ունեն հանքային իրավունք, անցումային ժամանակաշրջանում կհամարվի ժամանակավոր լիցենզառու:

Նույն բաժնի իմաստով «անցումային ժամանակաշրջան» նշանակում է սասնչորս ամիս՝ սկսած նույն օրենքի ուժի մեջ մտնելուց մեկ ամիս անց:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անցումային ժամանակաշրջանի ընթացքում ժամանակավոր լիցենզառու իրավունք ունի դիմելու լիազոր մարմնին՝ նույն օրենքով սահմանված կարգով հանքային իրավունք ստանալու նպատակով: Ժամանակավոր լիցենզառուն, որը մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը, 1992 թվականի մարտի 19-ի ՀՀ ընդերին

մասին օրենսգրքի համաձայն, ուներ հանփարդյունահանման լիցենզիա, իրավունք ունի դիմելու ժամանակավոր լիցենզիայում նշված ընդերքի սեղանասի նկատմամբ իր ընտրությամբ ստանալու հանփարդյունահանման կամ հանփարդյունահանման հասուկ լիցենզիա:

Այսպիսով, վերոնշյալ հոդվածների վերլուծությունից տարզվեց, որ 2002 թվականի նոյեմբերի 5-ին ընդունված և 2003 թվականի ապրիլի 1-ին ուժի մեջ մտած «Ընդերքն օգտակար հանածոների ԵԱՀԱԳՈՒՄԻ նախագահության և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի ուժով 2003 թվականի մայիսի 1-ից մինչև 2004 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակաշրջանը համարվում է «անցումային ժամանակաշրջան», իսկ Ընկերության 1999 թվականի հունվարի 29-ին սրված թիվ ՀՎ-Շ-13/62 լիցենզիան ստանում է «Ժամանակավոր լիցենզիայի» իրավական կարգավիճակ, որն անցումային ժամանակաշրջանի ավարտից հետո ճանաչվում է ուժը կորցրած:

Սույն գործով հաստատված փաստերը վկայում են, որ Ընկերությունն անցումային ժամանակաշրջանում՝ 2004 թվականի մայիսի 4-ին, ստացել է հանփարդյունահանման թիվ ՀԱ-Լ-14/143 հասուկ լիցենզիան, սակայն չի կնքել լիցենզային տայմանագիր՝ դասճառաբանելով, որ «Ընդերքն օգտակար հանածոների ԵԱՀԱԳՈՒՄԻ նախագահության և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով նման տահանջ չի ներկայացվում, և 2001 թվականին կնքված տայմանագիրը ԵԱՀԱԳՈՒՄԻ է մնալ ուժի մեջ:

Դատարանն իր վճռի հիմքում դրել է նույն իրավական հիմնավորումը, ինչը Վճռաբեկ դատարանը գտնում է անհիմն հետևյալ դասճառաբանությամբ.

2002 թվականի դեկտեմբերի 21-ին ուժի մեջ մտած ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի գործողության մեջ դրվելուց հետո մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը ընդերքօգտագործողները տարակարգ են վերագրանցելու ընդերքօգտագործման իրավունք սահմանող փաստաթղթեր՝ թույլտվությունը, լիցենզիաները և տայմանագրերը՝ համադասասխանեցնելով դրանք նույն օրենսգրքի դասանցներին:

Նշված օրինադրույթի իմաստով «ընդերքօգտագործման իրավունք սահմանող փաստաթղթերը վերագրանցել» նշանակում է անցումային ժամանակաշրջանում՝ մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը այդ փաստաթղթերը՝ թույլտվությունները, լիցենզիաները և տայմանագրերը համադասասխանեցնել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի դասանցներին, այն է՝ լիազոր մարմնից ստանալ հանփարդյունահանման կամ հանփարդյունահանման հասուկ լիցենզիա և դրա հիման վրա «Ընդերքն օգտակար հանածոների ԵԱՀԱԳՈՒՄԻ նախագահության և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով լիազոր մարմնի հետ կնքել լիցենզիային տայմանագիր: Լիցենզիա ստանալն ընդերքօգտագործողի իրավունքն է, իսկ փաստաթղթերի վերագրանցումը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի անցումային դրույթների ուժով տարակարգությունը:

Բացի այդ, «Ընդերքն օգտակար հանածոների ԵԱՀԱԳՈՒՄԻ նախագահության և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ դրույթի (անցումային դրույթներ) համաձայն՝ անցումային ժամանակաշրջանում սրված լիցենզիաների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են նույն օրենքով: Հետևաբար, 2004 թվականի մայիսի 4-ին ընկերությանը սրված լիցենզիայի հետ կապված բոլոր իրավահարաբերությունները, այդ թվում նաև լիցենզիային տայմանագիր կնքելու և լիցենզիայի ուժի մեջ մտնելու կարգը կարգավորվում է «Ընդերքն օգտակար հանածոների ԵԱՀԱԳՈՒՄԻ նախագահության և արդյունահանման համար սրամադրելու (կոնցեսիայի)

մասին» ՀՀ օրենքով, որի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հանգամանակապես իրավունք կորցնի և լիազոր մարմնի միջև կնքվում է լիցենզային դրամանագիր: Լիցենզային դրամանագիրը հանդիսանում է սվյալ հանգամանակապես իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի գործողության սկիզբ է համարվում լիցենզային դրամանագրի կնքման դառնալը:

Այսպիսով, «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար սրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի անցումային դրույթները կարգավորել են նախկինում սրված արձանագրի փոխարինումը նոր օրենսդրությանը համադասասխան սրված լիցենզիայով: Նախկին փաստաթղթերի, այդ թվում՝ դրամանագրերի փոխարինման դրամանագրերը և սահմանվել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 65-րդ հոդվածով, համաձայն որի՝ դա դեռ է կատարվել մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը: Այս ժամկետը համադասասխանում է «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար սրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքով սահմանված 14 ամսվա ժամկետին, որի ընթացքում ժամանակավոր լիցենզառու կարող է ստանալ հանգամանակապես հասույ լիցենզիա և այդպիսին ստանալու դրամանագրում սահմանում է դրամանագրերում՝ կնքելու համադասասխան լիցենզային դրամանագիր: Այսինքն՝ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ կետի դրամանագրերը կիրառելի են ոչ միայն նախկինում հանգամանակապես լիցենզիա չունեցող անձանց, այլև անցումային ժամանակաշրջանում նոր լիցենզիա ստացած անձանց նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոնշյալ հոդվածները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 2004 թվականի մայիսի 4-ին Ընկերությանը սրված լիցենզիայի ուժով դադարեցվում են 1992 թվականի մարտի 19-ի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (ուժը կորցրել է 2002 թվականի դեկտեմբերի 21-ին) հիման վրա սրված լիցենզիայի ուժով ծագած բոլոր իրավահարաբերությունները՝ այդ թվում նաև 2001 թվականի օգոստոսի 28-ին Ընկերության և ՀՀ բնադահողության նախարարության միջև կնքված ընդերքի սրամադրման և օգտագործման թիվ 215 դրամանագիրը, և լիցենզիայի գործողության սկիզբ է համարվում Ընկերության և ՀՀ առևտրի և սննդային զարգացման, ՀՀ բնադահողության նախարարությունների միջև 2005 թվականի օգոստոսի 25-ին կնքված հանգամանակապես նպատակով ընդերքօգտագործման թիվ 179 լիցենզիային դրամանագրի կնքման դառնալը (2005 թվականի օգոստոսի 25-ը):

Հետևաբար, 2004 թվականի հուլիսի 1-ից մինչև 2005 թվականի օգոստոսի 25-ին ընկած ժամանակաշրջանում Ընկերությունը թեև ունեցել է լիցենզիա, սակայն այդ լիցենզիան ուժի մեջ մտնում չի եղել, այսինքն՝ նշված դրույթի ուժով սվյալ ժամանակաշրջանում ընկերությունը զբաղվել է հանգամանակապես գործունեությամբ առանց նման իրավունք սվող փաստաթուղթ ունենալու:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը հաստատում է համարում այն հանգամանակները, որ Ընկերությունը 2004 թվականի հուլիսի 1-ից մինչև 2005 թվականի օգոստոսի 25-ին իրականացրել է առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեություն:

2) *վճռաբեկ բողոքը երկրորդ հիմնով հիմնավոր է մասնակիորեն* «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի մասով հետևյալ պատճառաբանությամբ.

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված կամ առանց լիցենզիայի կամ սվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս

այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկասիրական կամ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեղմում (ամօրինի գործունեություն) գանձվում է տուգանք:

Վճռաբեկ դասարանը գտնում է, որ ուժի մեջ չմտած լիցենզիայի տայմաններում լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելն իրավական առումով հավասարագոր է առանց լիցենզիայի նման գործունեությամբ զբաղվելուն, այսինքն՝ Օտաշայության կողմից Ընկերության նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանքի արձանագրումն իրավաչափ է:

Ինչ վերաբերում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասը չկիրառելու մասին բողոքի սույն հիմքի դասառաքանությանը, առաջ Վճռաբեկ դասարանը գտնում է, որ այն հիմնավոր չէ հետևյալ դասառաքանությամբ.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վարչական ակտերի ձևերի, դրանց ընդունման, հրատարակման կամ հրասարակման, ուժի մեջ մտնելու, փոփոխման, անվավեր ճանաչելու, գործողությունը դադարեցնելու, ինչդեռ նաև այդ ակտերի հասցեատերերին իրազեկելու հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները սահմանվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհասական իրավական ակտ է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և դատարանություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Նույն օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի, 54-րդ և 55-րդ հոդվածների համաձայն՝ Ընկերությանը սրված 1999 թվականի հունվարի 29-ի թիվ ՀՎ-Ը-13/62 օգտակար հանաժողովի արդյունահանման արժույթը հանդիսանում է վարչական ակտ, և դրա հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով: Հետևաբար, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով Ընկերությանը սրված 1999 թվականի հունվարի 29-ի թիվ ՀՎ-Ը-13/62 օգտակար հանաժողովի արդյունահանման արժույթի վրա չի կարող սարածվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բացի այդ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցման հետ միաժամանակ համադասարան գործողությունը դադարեցված է ճանաչվում նաև այդ իրավական ակտի համաձայն, կամ ի կատարումն դրա ընդունված նորմատիվ իրավական ակտերը կամ իրավական նորմերը, եթե իրավական ակտի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

2001 թվականի օգոստոսի 28-ին Ընկերության և ՀՀ բնադատարանության միջև կնքված ընդերքի սրամադրման և օգտագործման թիվ 215 տայմանագիրը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով չի հանդիսանում նորմատիվ իրավական ակտ և չի դարձնակում իրավական նորմ:

Սույն գործի բաժանակներում կնքված տայմանագիրը չի դարձնակում իրավական նորմ (դատարանը չէ անորոշ կամ որոշակի անձանց համար), փոխարենը իրենից ներկայացնում է մեկից ավելի անձանց համաձայնություն, որն ուղղված է ֆալսիֆիկատիվ իրավունքներ և դատարանություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն (ՀՀ

ֆաղաֆացիական օրենսգրքի 406-րդ հոդված): Պայմանագիրը չի կարող փոխարինել իրավական ակտին, իսկ իրավական ակտը՝ Պայմանագրին: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ կետը վերաբերում է իրավական ակտերի գործողության դադարեցման հետ միաժամանակ համադասասխան գործողությունը դադարեցված ճանաչելուն և սույն վեճի նկատմամբ կիրառելի չէ:

3) *բողոքը երրորդ հիմնով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և «Բնադաշտայնության և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 6-րդ և 20-րդ հոդվածները Դատարանի կողմից կիրառելու կամ չկիրառելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի սույն հիմքի փաստարկին հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում արդեն անդրադարձել է նվաճված դեղերի գնահատականին (սեռ օրինակ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեկավարության ծառայությունն ընդդեմ «Տավրիդա» ՍՊ ընկերության, 2006թ. սեպտեմբերի 28, ֆաղ. գործ թիվ 3-1864/ՏԳ (զույմար բռնագանձելու և ըստ ընկերության հակընդդեմ դիմումի՝ ակննդով անվավեր ճանաչելու դատահանջում): Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ նվաճված հարցին:

ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը վերանայում է դատարանների վճիռները և որոշումները՝ վճռաբեկ բողոքում նվաճված հիմքերի սահմաններում: Այս հոդվածի իմաստով, ելնելով նաև ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնի դատահանջից («Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ ղեկ է առնուցի իր դատահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները»), բողոքի հիմք հասկացության մեջ ներառված են նաև բողոքի հիմնավորումները: Այդ իսկ պատճառով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում նման հիմնավորումների բացակայությունն ինքնին անհիմն է դարձնում բողոքը, հետևաբար, Դատարանի կողմից նյութական իրավունքի կիրառման օրինականության սուղգման հիմքն առկա չէ:

Ընկերության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանում առկա փաստարկները մասնակիորեն հերքվում են սույն որոշման առաջին հիմքի պատճառաբանություններով: Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոքի պատասխանում առկա մյուս փաստարկներին, ադա Վճռաբեկ դատարանն անհնար է համարում դրանք ֆննդության առարկա դարձնել հետևյալ պատճառաբանությամբ.

Նյութական իրավունքի նորմերի խախտման մասին վճռաբեկ բողոքի պատասխանում նվաճված պատճառաբանությունները չեն կարող Վճռաբեկ դատարանի կողմից ֆննարկման առարկա դառնալ այն Պայմաններում, երբ դրանք չեն վկայակոչվել ստորադաս դատարանում և չեն գնահատվել դատարանի կողմից: Հետևաբար, դիմողի կողմից չներկայացված և Դատարանի կողմից չֆննդված նյութաիրավական դատահանջին վերաբերող փաստարկները և պատճառաբանությունները չեն կարող լինել Վճռաբեկ դատարանի ֆննարկման առարկա:

Այսդիտով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի և մասնակիորեն երկրորդ հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ ֆաղաֆացիական դատավարություն օրենսգրքի 226-րդ հոդվածի ուժով վերանայվող դատական ակտը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ սննտական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր փննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության

Քաղաքացիական գործ թիվ 3-26 (ՎԳ)

ֆաղաֆաղիական գործերով

2007թ.

վերաքննիչ դատարանի վճիռ

Քաղաքացիական գործ թիվ 06-2605

Նախագահող դատավոր՝ Լ.Գրիգորյան

Դատավորներ՝ Ն.Հովսեփյան

Գ.Մաթևոսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալաքը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

Նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐԶՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի մարտի 2-ին

դռնքաց դատական նիստում, քննելով դատասախանողներ Երևանի ֆաղաֆաղեսարանի և Գագիկ Հարությունյանի ներկայացուցչի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքները ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 19.09.2006 թվականի թիվ 06-2605 վճռի դեմ՝ ըստ Երվանդ Ավեսիֆյանի հայցի ընդդեմ Գագիկ Հարությունյանի, Երևանի ֆաղաֆաղեսարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անւարժ գույքի կադաստրի դեսական կոմիտեի «Մարաւ» սարաժֆային ստրաքաժանման՝ Երևանի ֆաղաֆաղեսի 28.12.1998 թվականի թիվ 1192 որուումը Երվանդ Ավեսիֆյանի հողամասի վրա գսնվող շինությունը Գագիկ Հարությունյանին օրինականացնելու մասով անվավեր ճանաչելու, Գագիկ Հարությունյանի և Երևանի ֆաղաֆաղեսարանի միջև 24.12.1999 թվականին կնվված հողի վարձակալության դայամանագիրն անվավեր ճանաչելու, նւված հողամասի և դրա վրա կառուցված շինության նկասմամբ հայցվորի սեֆականության իրավունքը ճանաչելու և Գագիկ Հարությունյանին, նրա հետ բնակվող մյուս անձանց շինությունից վսարելու դախանջների մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախադատությունը.

Դիմելով դատարան՝ հայցվորը դախանջել է անվավեր ճանաչել Երևանի ֆաղաֆաղեսի 28.12.1998 թվականի թիվ 1192 որուումը Երվանդ Ավեսիֆյանի հողամասի վրա գսնվող շինությունը Գագիկ Հարությունյանին օրինականացնելու մասով, Գագիկ

Հարությունյանի և Երևանի ֆաղափառության միջև 24.12.1999 թվականին կնքված հողի վարձակալության դաշմանագիրը, նշված հողամասի և դրա վրա կառուցված շինության նկատմամբ 17.09.2002 թվականի սեփականության իրավունքի վկայականը, նշված հողամասի և դրա վրա կառուցված շինության նկատմամբ ճանաչել հայցվորի սեփականության իրավունքը և Գագիկ Հարությունյանին և նրա հետ բնակվող մյուս անձանց վսարել շինությունից:

Երևանի Կենտրոն և Նորֆ-Մարաբ համայնքների առաջին ասյանի դասարանի 08.11.2005 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ մասնակի անվավեր է ճանաչվել Երևանի ֆաղափառության 28.12.1998 թվականի թիվ 1192 որոշումը Երվանդ Ավետիսյանի հողամասի վրա գտնվող շինությունը Գագիկ Հարությունյանի անվամբ օրինականացնելու մասով, անվավեր է ճանաչվել Գագիկ Հարությունյանի և Երևանի ֆաղափառության միջև 24.12.1999 թվականին կնքված հողի վարձակալության դաշմանագիրը, անվավեր է ճանաչվել նշված հողամասի և շինության նկատմամբ Գագիկ Հարությունյանի անվամբ 17.09.2002 թվականին սրված սեփականության իրավունքի թիվ 504923 վկայականը, և շինությամբ ծանրաբեռնված հողամասի նկատմամբ ճանաչվել է Երվանդ Ավետիսյանի սեփականության իրավունքը, Գագիկ Հարությունյանը և նրա հետ բնակվող անձինք վսարվել են այդ շինությունից:

ՀՀ ֆաղափառության գործերով վերաքննիչ դասարանի 19.09.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ Երևանի ֆաղափառության 28.12.1998 թվականի թիվ 1192 որոշումը մասնակի՝ Երվանդ Ավետիսյանի՝ Երևանի Ամառանոցային 227 հասցեում գտնվող հողամասի վրա գտնվող շինությունը Գագիկ Հարությունյանի անվամբ օրինականացնելու մասով անվավեր է ճանաչվել, անվավեր է ճանաչվել Գագիկ Հարությունյանի և Երևանի ֆաղափառության միջև 24.12.1999 թվականին կնքված հողի վարձակալության դաշմանագիրը, անվավեր է ճանաչվել նշված հողամասի և շինության նկատմամբ Գագիկ Հարությունյանի անվամբ 17.09.2002 թվականին սրված սեփականության իրավունքի թիվ 504923 վկայականը, Գագիկ Հարությունյանը և նրա հետ վերը նշված հասցեում բնակվող անձինք վսարվել են վերը նշված շինությունից:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Երևանի ֆաղափառությանը և Գագիկ Հարությունյանը:

Վճռաբեկ բողոքներին դասասխաններ չեն ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստերը և դատախազը.

Սույն վճռաբեկ բողոքի քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհոսքայալ հիմնավորումներով.

Ըստ պատասխանող Երևանի ֆաղափառության կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի՝

ՀՀ ֆաղափառության գործերով վերաքննիչ դասարանը խախտել է ՀՀ ֆաղափառության դասավարտության օրենսգրքի 53-րդ հոդվածը: Վերաքննիչ դասարանը գործում եղած աղացույցները չի գնահատել դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա:

ՀՀ ֆաղափառության գործերով վերաքննիչ դասարանի 19.09.2006 թվականի թիվ 06-2605 վճռի դասառաքանական մասում արված այն հետևությունը, որ վիճելի սարածքի նկատմամբ Գագիկ Հարությունյանի սեփականության իրավունքի գրանցման համար հիմք ծառայած փաստաթուղթն այլևս իրավական ուժ չունի, անհիմն է, քանի որ Երևանի ֆաղափառության 28.12.1998 թվականի թիվ 1192 որոշմամբ օրինականացվել է Գագիկ

Հարությունյանի կողմից կառուցված 133 ֆմ մակերեսով բնակելի ավսոսնակը, որը մինչև սույն վճռի կայացումը որևէ ակտով անվավեր ճանաչված չի եղել:

Դատարանը ադաջուցված է համարել այն հանգամանքը, որ հայցվորին սեփականության իրավունքով ղայականում է 2000 ֆմ մակերեսով հողամաս՝ չնայած այն հանգամանքին, որ հայցվորի սեփականության իրավունքի վկայականում հողամասի չափը 1993 թվականին նշված է եղել 1710 ֆմ: Դատարանը չի գնահատել նաև այն հանգամանքը, որ հայցվորը 08.10.2003 թվականին նոսարական կարգով վավերացված համաձայնագրով հրաժարվել է 133 ֆմ մակերեսով հողամասից և համաձայնվել է, որ իր սեփականատիրական իրավունքները հաստատվեն 1577ֆմ մակերեսով հողամասի նկատմամբ: Դատարանի կողմից լրիվ և բազմակողմանի չի գնահատվել նաև ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ «Մարաւ» սարածային ստորաբաժանման կողմից 15.09.2004 թվականին սրված եզրակացությունը, համաձայն որի՝ հայցվորի և ղայասախանողի հողամասերը համադրվում են 57 ֆմ մակերեսի չափով: Ինչոքես երևում է ներկայացված հասակագծից, համադրվող հողամասը որևէ շինությամբ ծանրաբեռնված չէ, նույն հասակագծից հսակ երևում է, որ եթէ անգամ ընդունենք, որ ևս 76 ֆմ հողամասը հայցվորին հասկացված հողամասում է, միևնույն է, այդ սարածքը ևս չկառուցաղայաված հողատարած է, ուստի դատարանը չէր կարող հանգել այնոխի եզրակացության, թէ ղայասախանողի կողմից կառուցված բնակելի տունը գտնվում է հայցվորին 1947 թվականին հասկացված հողամասի սահմաններում, քանի որ որևէ նման աղացույց դատարանին չի ներկայացվել և քաղաքացիական գործի նյութերում գոյություն չունի:

Ըստ պատասխանող Գագիկ Հարությունյանի ներկայացուցչի բողոքի՝

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ և 280-րդ հոդվածները, որոնք ղետք է կիրառեր:

Դատարանը չի ղարգել, թէ Գագիկ Հարությունյանի կողմից օգտագործվող շինությունը ինչու չի արձանագրվել հայցվորի անվամբ սրված սեփականության իրավունքի վկայականում, երբ Գագիկ Հարությունյանի շինությունն այդ սարածքում գոյություն ունի դեռևս 1990 թվականից:

Դատարանը քննության առարկա չի դարձրել նաև Նորի այգիներ թիվ 227 հասցեի քուրջ առաջացած վեճի մասին Երաղխորհրդի գործկոմի օրինականության, իրավակարգի և մարդու իրավունքների ղաւոքաբանության հանձնաժողովի 09.09.1992 թվականի եզրակացությունը, որով աղացուցվում է, որ Գ.Հարությունյանի իրավանախորհրդեր Ալեքսեյ և Եվդոկիա (Դունյա) Գուսկովները 1950 թվականից մեւական գրանցումով բնակվել են վիճելի հասցեում, հեւսաքար, Երվանդ Ավեւիքյանի կողմից հողամասը և շինությունը սեփականաւոքորհելիս ղետք է հաւվի առնվելին Գուսկովների իրավահաջորդի իրավունքները: Դատարանը հաւվի չի առել, որ Գագիկ Հարությունյանին սեփականաւոքորհվել են ոչ թէ Երվանդ Ավեւիքյանի, այլ Երևանի քաղաքաղետարանի սեփականությունը հանդիսացող հողամասը և շինությունը, որը կառուցաղայատել է Գագիկ Հարությունյանը:

Դատարանը ճիւոք չի գնահատել նաև այն փաստը, որ Երվանդ Ավեւիքյանի անվամբ 1993 թվականին սրված սեփականության իրավունքի վկայականում հողամասի չափերը սահմանվել են ոչ թէ 2000 ֆմ, այլ 1710 ֆմ, որից հեւսում է, որ դեռևս 1993 թվականին Ե.Ավեւիքյանը հրաժարվել է իր հողամասի 290 ֆմ մակերեսից, իսկ 2003 թվականին նոսարական կարգով վավերացված համաձայնագրով՝ ևս 133 ֆմ-ից: Հեւսաքար, Երվանդ Ավեւիքյանը հրաժարվել է դեռևս 21.09.1948 թվականին իրեն հասկացված 2000 ֆմ

հողամասի 423 ֆմ մակերեսից, որոյիսի գործողությունները համադասասխանում են ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 279-րդ և 280-րդ հոդվածներին:

Հետևաբար, արդեն իսկ իր սեփականությունը չհանդիսացող հողամասի նկատմամբ հայցվորը չէր կարող դահանջ ներկայացնել: Այս հանգամանքը վկայում է դասարանի կողմից նյութական իրավունքի նորմի խախտման մասին:

Բողոք բերած դասասխանողները դահանջել են բեկանել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանի 19.09.2006 թվականի թիվ 06-2605 վճիռը և գործն ուղարկել նույն դասարան՝ այլ կազմով նոր ֆննության:

3. Վճռաբեկ բողոքի ֆննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքների ֆննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի ֆաղաֆադետի 28.12.1998 թվականի թիվ 1192 որոշմամբ օրինականացվել է Գագիկ Հարությունյանի կողմից կառուցված 133 ֆմ մակերեսով բնակելի ավտոսնակը:

2) ՀՄՍՀ աշխատավորների դասգամավորների Երևանի ֆաղաֆարհողի գործկոմի 1948 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ Երվանդ Ավետիսյանին ներկայիս Ամառանցային թիվ 227 հասցեում հասկացվել է 2000 ֆմ մակերեսով հողատարածք:

3) Երվանդ Ավետիսյանին 1993 թվականին սրված սեփականության իրավունքի վկայականում հողամասի չափը սահմանվել է 1710 ֆմ:

4) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադասրի դետական կոմիտեի «Մարա» սարածֆային ստորաբաժանման կողմից 15.09.2004 թվականին սրվել է եզրակացություն, համաձայն որի՝ հայցվորի և դասասխանողի հողամասերը համարվում են 57 ֆմ մակերեսի չափով:

5) Երվանդ Ավետիսյանը 2003 թվականին նոտարական կարգով վավերացված համաձայնագրով համաձայնություն է սվել, որ Երևանի Նորի այգիներ թիվ 227 հասցեում գտնվող իր հողատարածքը կադասրում գրանցվի 1577 ֆմ մակերեսով:

4. Վճռաբեկ դասարանի դասձառաբանությունները և եզրահանգումները.

Քննելով վճռաբեկ բողոքները նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դասարանը գտնում է, որ՝

4.1. Երևանի ֆաղաֆապետարանի բողոքը հիմնավոր է հետևյալ պատձառաբանությամբ.

ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դասարանը յուրաֆանչյուր աղացույց գնահատում է գործում եղած բոլոր աղացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, ինչը ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանի կողմից չի դահողանվել, որի արդյունքում խախտվել է վերը նշված օրենքի դահանջը: Մասնավորադետ, դասարանը չի վերլուծել և չի գնահատել գործի ձիոտ լուծման համար էական նշանակություն ունեցող այնդիսի աղացույցներ, ինչդիսիսի են նոտարական կարգով 08.10.2003 թվականին վավերացված համաձայնագիրը և ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ «Մարա» սարածֆային ստորաբաժանման կողմից 15.09.2004 թվականին սրված եզրակացությունը:

Այդդետ՝ թեն Երաղաղաղաղի գործկոմի 1948 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ Ամառանցային 227 հասցեում հայցվորին հասկացվել է 2000 ֆմ մակերեսով հողամաս,

այնուամենայնիվ, 1993 թվականին հայցվորին սրված սեփականության իրավունքի վկայականում հողամասի չափը նշված է եղել 1710 քմ, որն էլ փաստացի սնօրինել է հայցվորը: ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի համաձայն՝ հողամասի սարածֆային սահմանները որոշվում են օրենքով սահմանված կարգով՝ լիազորված ղեկավարական մարմնի կողմից՝ սեփականատիրոջը սրված փաստաթղթերի հիման վրա:

ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանը չի ուսումնասիրել և գնահատել այն փաստը, որ հայցվորը նոսարական կարգով 08.10.2003 թվականին վավերացված համաձայնագրով համաձայնվել է, որ իր սեփականատիրական իրավունքները հաստատվեն 1577 քմ մակերեսով հողամասի նկատմամբ, ինչը բավարար հիմք է եզրակացնելու, որ հողամասի մյուս մասով առկա է գույքից հրաժարում:

Տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ սեփականության իրավունքը դադարում է սեփականատիրոջ կողմից իր գույքն օտարելու, **սեփականության իրավունքից հրաժարվելու**, գույքը ոչնչացնելու և գույքի նկատմամբ սեփականության իրավունքի կորստի՝ օրենքով նախատեսված այլ դեղքերում: Իսկ սեփականությունից հրաժարման դեղքերը նախատեսված են նույն օրենսգրքի 280-րդ հոդվածում, որի համաձայն՝ ֆաղաֆացին կամ իրավաբանական անձը կարող է հրաժարվել իրեն ղայականող գույքի սեփականության իրավունքից՝ այդ մասին **գրավոր հայտարարելով** կամ այնուհետև գործողություններ կատարելով, որոնք ակնհայտ վկայում են գույքի տիրապետումից, օգտագործումից և սնօրինումից նրա մեկուսացման մասին՝ առանց այդ գույքի նկատմամբ որևէ իրավունք ղայահղանելու մտադրության: ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և ղայարականությունները դադարելու համար, մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը:

Տվյալ դեղքում սեփականատերը իր գույքից հրաժարվել է գրավոր՝ նոսարական գրասենյակում իր կողմից սրված համաձայնագրով, որը գրանցվել է թիվ 16868 սեղանամատյանում: Հարկ է նաև նկատել, որ ֆաղաֆացու՝ հողից գրավոր հրաժարվելու հանգամանքը, կատարված նոսարական վավերացման ձևով, ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով հողամասը դարձել է ղետևության սեփականությունը: ՎՃՈՍՔԵԿ դատարանի նման եզրահանգումը ղայամանավորված է նաև՝ ելնելով սույն գործի առանձնահատկություններից, մասնավորաղետ այն փաստից, որ հողամասի նկատմամբ իրավունքներից ֆաղաֆացու հրաժարվելուց հետո ֆաղաֆացուն սրամաղդրվել է սեփականության իրավունքի նոր վկայագիր, իսկ ֆաղաֆացու հրաժարման փաստը կաղայասրի մարմնին հիմք էր սահմանված չափով գրանցումը կատարելու համար:

Տվյալ դեղքում ֆաղաֆացին օգվել է իր սուքյեկտիվ իրավունքից և հրաժարվել է հողամասի մի մասից: Իսկ նման դեղքում, բնականաղար, ղետևական իրավասու մարմինները չէին կարող ֆաղաֆացու հետ կնքել այլ ղայամանագիր կամ սեփականության իրավունքի գրանցումը կատարել այլ ծավաղով, քան ցանկանում էր ֆաղաֆացին:

Աղայտա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների ղետևական գրանցման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ անցարժ գույքի ղայաբանջող միավորի համար կազմված կաղայասրային գործն իր մեղ ընղղրկում է անցարժ գույքի առանձին միավորների նկատմամբ իրավունքներ և սահմանափակումներ հաստատող հետևյալ փաստաթղթերը, այդ թվում՝ անցարժ գույքից կամ դրա մի մասից սեփականատիրոջ հրաժարվելու մասին որոշումները: Նույն օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ անցարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի

դադարման մասին որոշումները, վճիռները և դատավճիռները, **անճարժ գույքից կամ դրա մի մասից սեփականատերից հրաժարվելու մասին դիմումները**, անճարժ գույքի վարձակալության, օգտագործման իրավունքի դադարման մասին որոշումները ենթակա են դեռևս կան գրանցման՝ կատարելով համադասասխան փոփոխություններ գրանցման մասյանի՝ սլյալ անճարժ գույքի միավորի գրանցման թերթիկում և կադասրային ֆարեգում:

Հեռաքար, նոտարական կարգով վավերացված համաձայնագիրը, սեփականության իրավունքի գրանցամասյանում, հեռաքար նաև՝ վկայագրում համադասասխան փոփոխություններ կատարելն ինքնին հաստատում են ֆադաֆացու սեփականության իրավունքից հրաժարվելու փաստը:

ՀՀ ֆադաֆացիական գործերով վերաքննիչ դատարանը սլյալ ֆադաֆացիական գործով վճիռ կայացնելիս ընդհանրադեպ չի անդրադարձել ՀՀ կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադասրի դեռևս կան կոմիտեի տարածֆային ստորաքաժանման կողմից 15.09.2004 թվականին տված եգրակացությանը, համաձայն որի՝ հայցվորի և դատասախանողի հողամասերը համադրվում են 57,3 քմ մակերեսի չափով:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Վճռաքել դատարանը գտնում է, որ հիմնավոր է վճռաքել բողոքի այն փաստարկը, որ դատարանը դատաճաճ չի գնահատել այն ադացույցները, որոնք կհավաստեին համադրվող հողամասը որևէ շինությանը ծանրաքեռնված լինելու փաստը: Նույն փաստարկի լույսի ներքո ֆադաֆացիական գործում քացակայում է դատասախանողի կողմից կառուցված բնակելի տունը հայցվորին հասկացված հողամասի սահմաններում գտնվելու փաստը հավաստող ադացույցը:

Այսդիտով, Վճռաքել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ ֆադաֆացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հողվածի խախտում, ինչի հեռևանքով քազմակողմանի, լրիվ և օքելեկիվ հեռագոտության հիման վրա չեն գնահատվել գործում առկա ադացույցները:

4.2. Գագիկ Հարությունյանի վճռաքել բողոքի մասով.

Վճռաքել դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր է:

Վճռաքել դատարանը սլյալ բողոքում ներկայացված իրավական փաստարկներին այլևս չի անդրադառնում, ֆանի որ դրանց հիմնավոր լինելու դատաճառաքանությունները տրված են Երևանի ֆադաֆադեի վճռաքել բողոքի կադակցությանը:

Այսդիտով, դատասախանողների բողոքներում նեված հիմքերի առկայությունը, ՀՀ ֆադաֆացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հողվածների համաձայն, ՀՀ ֆադաֆացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու հիմք է հանդիսանում:

Միաժամանակ Վճռաքել դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված վճռաքել բողոքները ենթակա են քավարման մասնակիորեն:

Սույն ֆադաֆացիական գործի վարույթը Գագիկ Հարությունյանի անվամբ 17.09.2002 թվականին տրված սեփականության իրավունքի թիվ 504923 վկայականն անվավեր ճանաչելու դատահանջի մասով ենթակա է կարճման հեռևալ դատաճառաքանությանը:

ՀՀ ֆադաֆացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հողվածի 1-ին մասի 1-ին կեի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության: ՀՀ ֆադաֆացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հողվածի համաձայն՝ դատական ակտերի վերանայման արդյունքում Վճռաքել դատարանը կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, եթե գործի վարույթը կարճելու հիմքերն ի հայտ են եկել ստորադաս դատարանում գործի քննության ժամանակ:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է այն հարցին, որ սեփականության իրավունքի գրանցման վկայականը հանդիսանում է սեփականության իրավունքի գրանցման մասին տեղեկություններ դարձնակող փաստաթուղթ, և այդ փաստաթղթի անվավեր ճանաչելը չի հանգեցնում իրավական հետևանքների, քանի որ ուժի մեջ է մնում վարչական ակտը՝ անհարժ գույքի գրանցման մասյանի գրանցումը (իրավական հիմնավորումը տես Միսիանի ֆաղափառության ընդդեմ Շահեն Մարգարյան, երրորդ անձինք ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Միսիանի ստորաբաժանում, Կորյուն Օհանյան, 26.10.2006 թվական, ֆաղափառական գործ թիվ 3-1920/ՎԴ (2002 թվականի օգոստոսի 26-ին կնքված դայմանագիրը լուծելու, Շահեն Մարգարյանի և Կորյուն Օհանյանի միջև 11.09.2002 թվականին կնքված անհարժ գույքի առուվաճառքի դայմանագիրը, ինչդեպ նաև Կորյուն Օհանյանին սրված սեփականության իրավունքի վկայականն անվավեր ճանաչելու դատահանջներով):

Հետևաբար, Գագիկ Հարությունյանի անվամբ 17.09.2002 թվականին սրված սեփականության իրավունքի թիվ 504923 վկայականն անվավեր ճանաչելու հարցը ենթակա չէ դատարանում քննության:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափառական դատարանության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանողներ Երևանի ֆաղափառության և Գագիկ Հարությունյանի Վճռաբեկ բողոքները բավարարել մասնակիորեն:

Բեկանել ՀՀ ֆաղափառական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 06-2605 վճիռը Երևանի ֆաղափառության 28.12.1998 թվականի թիվ 1192 որոշումը մասնակի՝ Երվանդ Ավետիսյանի՝ Երևանի Ամառանոցային 227 հասցեում գտնվող հողամասի վրա գտնվող շինությունը Գագիկ Հարությունյանի անվամբ օրինականացնելու մասով անվավեր ճանաչելու, Գագիկ Հարությունյանի և Երևանի ֆաղափառության միջև 24.12.1999 թվականին կնքված հողի վարձակալության դայմանագիրն անվավեր ճանաչելու, Գագիկ Հարությունյանին և նրա հետ նշված հասցեում բնակվող անձանց շինությունից վարելու մասերով, և գործն այդ մասերով ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Գագիկ Հարությունյանի անվամբ 17.09.2002 թվականին սրված սեփականության իրավունքի թիվ 504923 վկայականն անվավեր ճանաչելու դատահանջի մասով ֆաղափառական գործի վարույթը կարճել:

3. ՀՀ ֆաղափառական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 06-2605 վճիռը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

4. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մնում հրադարակման դատից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության
ֆաղափացիական գործերով
սնտեսական դատարանի վճիռ
Քաղափացիական գործ թիվ S-2637
Նախագահող դատավոր՝ Տ.Նազարյան

Քաղափացիական գործ թիվ 3-27(ՏԳ)
2007թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղափացիական տալասը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2007 թվականի մարտի 2-ին

դռնբաց դատական նիստում, ֆննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեհական ծառայության (այսուհետ նաև՝ Ծառայություն) վճռաբեկ բողոքը ՀՀ սնտեսական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 8-ի թիվ S-2637 ֆաղափացիական գործով կայացրած վճռի դեմ՝ ըստ «Էղալեհ» սահմանափակ ղաասախանասվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) դիմումի ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեհական ծառայության՝ 2006 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1017365 ստուգման ակցն անվավեր ճանաչելու ղահանջի մասին,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախադասմությունը.

Դիմելով դատարան՝ դիմողը ղահանջել է անվավեր ճանաչել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեհական ծառայության 2006 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1017365 ստուգման ակցը:

ՀՀ սնտեսական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 8-ի թիվ S-2637 վճռով դիմումը բավարարվել է:

2.Վճռաբեկ բողոքի հիմները, փաստարկները և ղահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը ֆննվում է հետևյալ հիմների սահմաններում ներհիեյալ հիմնավորումներով.

1) ՀՀ սնտեսական դատարանը չի կիրառել «Ծառայությանն առընթեր» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 4-րդ մասի «է» կետը, ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 857-րդ

հողվածը, որոնք ղեկավարում է կիրառել, սխալ է մեկնաբանել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասը:

Բողոք բերած անձը նշված դեպքում ղեկավարում է հետևյալ փաստաթուղթերով.

Դատարանի եզրահանգումն այն մասին, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի «է» կետը կիրառելի չէ, քանի որ այն վերաբերում է միայն բեռների փոխադրումներին, անհիմն է, քանի որ վերոնշյալ կետի համաձայն՝ այլ եկամուսներ են համարվում բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուսները, իսկ ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 857-րդ հոդվածի համաձայն՝ ֆրախտի ղեկավարող օբյեկտ է համարվում նաև ուղևորների փոխադրումը:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքները՝ վճռաբեկ բողոք բերած անձը եկել է եզրահանգման այն մասին, որ Հարկային ղեկավարման ծառայության 2006 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1017365 ստուգման ակտի առաջին կետով առաջադրված ղեկավարությունը շահութահարկի գծով համադասասխանում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

